

«Սիրահարների» այգու բարեկարգման ծրագիր

«Պողոսյան պարտեզներ» ծրագրի շրջանակում, «Պողոսյան» հիմնադրամի հովանավորությամբ

ՄԱՍԼՈ ՅԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

28 Ապրիլ, 2008, Երեւան - «Սիրահարների» այգու շինարարական աշխատանքները վերսկսեցին սույն թվականի մարտի 15-ին: Այգու բարեկարգումն իրականացվում է «Պողոսյան» հիմնադրամի և «Հայաստան» համահայկական հիմնադրամի համատեղ գործունեությամբ: Ծրագրի շրջանակներում կիրականացվի նաև այգու հետագա շահագործումը: Ընթացիկ տարվա սեպտեմբերին այգին հանդիսավորությամբ կբացի իր դռները նոր տեսքով, նոր հմայքով:

Այսօր այգում կատարվում են լայնածավալ շինարարական բարեկարգման աշխատանքներ: Այգու ընդհանուր տարածքը 1.6 հա է, որից 1.05 հեկտարը կլինի կանաչապատ: Այգում նստարանների քանակը կլինի մոտ 150 գծամետրի չափով: Այգին կունենա երկու ջրվեժներ, լճակ, ամֆիթատրոն իր՝ ավելի քան 200 նստատեղով, բացօթյա սրճարան, ավազապատ ճեմուղիներ մարզումներ անցկացնող անձանց համար և տաղավար-շվաքարաններ՝ սեղանի խաղերի համար:

Վերակենդանացած այգու ծառերի քանակը կգերազանցի 300-ը: Մինչ շինարարական աշխատանքները սկսելը, մի շարք բնապահպանական հասարակական կազմակերպությունների և քաղաքապետարանի մասնագետների կողմից ուսումնասիրվեցին ծառերի վիճակը: Դրա արդյունքում առաձևացվեցին թվով 19 չորացած ծառեր, որոնցից 16-ը հատվեցին, իսկ 3 նմանատիպ ծառեր պահպանվեցին գեղազարդման (դեկորատիվ) նպատակներով: Այգու նախագծման աշխատանքների արդիական լինելու մասին է խոսում նաև սակավաշարժ այցելուների նկատմամբ վերաբերմունքը. այգում չկան աստիճաններ, իսկ հանրային զուգարաններում կան հատուկ զուգարանախցիկներ:

Բարեկարգման նախագիծը մշակվել է շվեդարաբնակ լանդշաֆտային ճարտարապետ Պիեռ Ռամբախի կողմից: Հիմնական համաշինարարական աշխատանքները իրականացնում է «Գյուղտնտշինմոնտաժ թիվ 1» ՓԲԸ-ն: Այգու աշխատանքներն համակարգվում են վերահսկվում են Համակարգող գրասենյակի կողմից, որը տեղակայված է այգու հարեանությամբ:

Վերակենդանացած «Սիրահարների» այգին *մի անգնահատելի նվեր է Պողոսյան ընտանիքի կողմից Երեւան քաղաքին և նրա բնակիչներին:*

Հավելյալ տեղեկությունների և առաջարկությունների համար խնդրում ենք դիմել Համակարգող գրասենյակի անձնակազմին, ովքեր սիրով կպատասխանեն ձեր հարցերին և կներկայացնեն այգու աշխատանքների ընթացքը:

Համակարգող Գրասենյակ

Հասցե՝ Մ. Բաղրամյան 25, Երեւան, ՀԱՅԱՍՏԱՆ

Հեռ՝ +374 10 224437

Էլ. փոստ՝ info@boghossiangardens.org

//////////

«Պողոսյան» հիմնադրամը ղեկավարում են Ժան (Բելգիա) և Ալբերտ (Շվեդարիա) Պողոսյանները: Նշված հիմնադրամը ավելի քան տասը տարի լայնածավալ, բազմատեսակ աշխատանքներ է կատարում Հայաստանում (մասնավորապես Շիրակի մարզում) և Լեռնային Ղարաբաղում: 2000 թվականին «Պողոսյան» հիմնադրամը հիմնադրեց Հանրապետության Նախագահի Մրցանակը, որն ուղղված է խրախուսելու տարբեր ոլորտների լավագույն մասնագետներին:

PRESS RELEASE

Lovers' Park Yerevan Landscaping and Design Project

A Boghossian Gardens project, sponsored by Boghossian Foundation

28 April, 2008, Yerevan - Reconstruction work at "Lovers' Park" (previously Pushkin Park) on Baghramian Avenue resumed on 15 March, 2008. The Lovers' Park Yerevan Landscaping and Design Project started in 2005. The Project is sponsored by "**Boghossian**" **Foundation** (previously "Robert Boghossian and Sons" Fund) and implemented in collaboration with ("Hayastan" All Armenian Fund). This is not merely a reconstruction initiative; it is a renovation project which also insures the sustainable maintenance of the park. The garden will open to the public in September 2008.

Remodeling and construction works are being carried out on a large scale at the park. The entire area of the park is 1.6 hectares; 1.05 hectares of which will be covered in lawns. Seating in the park includes 300 meters of benching. The park will have two waterfalls, a lake, an amphitheater with its more than 200 seats, a small open air café, sand paths for those who enjoy exercising and shaded pavilions for table games.

The overall number of trees in the revitalized park will be 300. At the first stage of the construction works, under the guidance of representatives of ecological NGO's and the City Hall. 16 dried trees were cut and another 3 preserved for decorative purposes. The entire area of the park including the public restroom will be handicap accessible.

The design for the reconstruction of the new Lovers' Park has been created by Pierre Rambach, a well known landscape architect based in Switzerland. The main construction works are being realized by "Gyughtntshinmontage No. 1" CJSC. The works are being supervised by the Coordination Office, which is situated close to the park.

The renovated Lovers' park is a gift from the Boghossian family to the city of Yerevan and its citizens.

For more information please contact the staff of the Coordination office which will be very pleased to answer all your questions and even act as guides for those who wish to see the project in process.

Coordination Office

Address: 25 Baghramyan Street, # 61, Yerevan, ARMENIA

Tel.: +374 10 224437

Email: info@boghossianguardens.org

//////////

The **Boghossian Foundation** is headed by Jean Boghossian, based in Belgium and Albert Boghossian, based in Switzerland. For numerous years the Foundation has carried out large scale works both in Armenia (especially in the Shirak region) and Nagorno-Karabakh. In 2000 the Boghossian family established the annual "President of the Republic of Armenia Prize" aimed at encouraging the best specialists from different fields.